ՔԱՐՈԶԽՍՈՒԹԻՒՆ

Տ. ՀՈՎՆԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(09 մայիսի, 2013 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այսօր համբարձար փառօք ի յերկինս
եւ զկուսածին մարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր»:
Ժամագիրք

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Ահա այսպես է նկարագրվում օրվա ժամամուտը՝ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի համբարձման դրվագը, որը տեղի ունեցավ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունից ճիշտ քառասուն օրեր հետո:

Քրիստոս հարություն առավ եւ անմիջապես երկինք չհամբարձվեց, որպեսզի բազում կերպերով փաստեր Իր հարության ճշմարտացիությունը: Նախ՝ մի քանի անգամ երեւաց իր աշակերտներին՝ ինչը վկայված է Հովհաննու Ավետարանում: Այս երրորդ անգամ էր, որ Հիսուս երեւաց աշակերտներին մեռելների հարությունից հետո, կերավ եւ խմեց նրանց հետ: Մենք բոլորս քաջ գիտենք, որ Տերը, բնավ, դրա կարիքը չուներ, սակայն Տերը կերավ Իր ծառաների հետ, Վարդապետը՝ Իր աշակերտների հետ, Առաքողը՝ առաքյալների հետ: Կերավ, որպեսզի մեկ անգամ եւս փաստեր Իր հարության ճշմարտացիությունը՝ հայտարարելով, որ այն մարմինը, որով հրեաները անարգեցին, նույն մարմնով հարություն է առել: Ինչպես որ Տերը ստուգապես հայտնեց Իր մահը, նույնպես եւ ստուգապես պետք է հայտներ Իր հարությունը: Եթե Տերը հարություն առներ ու մեկ անգամ երեւար Իր աշակերտներին եւ անմիջապես համբարձվեր, առաջին հերթին կասկած պիտի հարուցեր իր իսկ աշակերտների մոտ: Նրանք պիտի կարծեին, որ Տիրոջ հարությունը ճշմարտապես տեղի չի ունեցել, այլ թվացյալ է եղել:

Քրիստոսի համբարձումը մեզ հույս բերեց: Ինչպես ասվում է Սուրբ Գրքում. «Իմ Հայրը բազում օթեւաններ ունի երկնքում, Ես գնում եմ այնտեղ ձեզ համար օթեւաններ պատրաստելու եւ դարձյալ պիտի գամ ու ձեզ վերցնեմ Ինձ մոտ»: Եթե Տերը չհամբարձվեր, ապա Մխիթարիչը չպիտի գար: Հովհաննու Ավետարանում ասվում է. «Եթե ես չգնամ՝ Մխիթարիչը չի գա ձեզ մոտ: Ես պիտի գնամ, որպեսզի Նրան առաքեմ դեպի

ձեզ»: Տերը վերցրեց մեր մարդկային բնությունը մեզանից եւ առավել եւս բարձրացրեց Ձիթենյաց լեռան բարձունքները եւ տվեց մեզ այն հույսը, որ մենք էլ մի օր կարող ենք բարձրանալ այդ անմատչելի բարձունքը: Ինչպես որ Սուրբ Գրքում է ասվում. «Ուր որ Ես եմ, այնտեղ եւ Իմ պաշտոնյաները պիտի լինեն»:

Սիրելի հավատացյալներ, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի համբարձման դրվագը նկարագրելիս Ղուկաս Ավետարանիչը գրում է, թե Ինքը վերցնելով իր աշակերտներին՝ գնաց, բարձրացավ Բեթանիա: Բարձրացնելով Իր ձեռքերը՝ օրհնեց նրանց: Մինչդեռ օրհնում էր, հանկարծ առանձնացավ իրենցից եւ երկինք վերացավ: Եւ Սուրբ Գիրքը ավելացնում է, թե աշակերտները մեծ ուրախությամբ եւ խնդությամբ վերադարձան Երուսաղեմ:

Բեթանիայից, Ձիթեանյաց լեռան վրայից համբարձվելը խորհրդանշում էր Ադամի սգո տան՝ երկնքում ուրախության փոխակերպվելը, քանի որ Բեթանիա սգո եւ ցաւալի բանքների տուն է նշանակում: Ադամի սգո եւ ցաւալի բանքների տունը այն երկիրն էր, այն վայրը, որտեղ մենք կորցրինք մեր մարդկային բնությունը՝ դրախտի վայելչությունից: Ինչպես որ Բեթանիան մոտ էր Ներքին Երուսաղեմին, այնպես եւ մեր ներքին աշխարհը մոտ է Վերին Երուսաղեմին: «Եթե մենք ցանկանանք, մենք կարող ենք փութով բարձրանալ դեպի վեր, ինչպես Տերը հրաշափառապես վերացավ երկինք», - ասում է Ս. Աթանաս Հայրապետը:

Գործք Առաքելոցում հանդիպում ենք. «Մինչդեռ խոսում էին, հանկարծ Ինքը վերացավ երկինք»: Վերացավ աշակերտների աչքերի առաջ, որպեսզի տեսնեն, որ նրա համբարձումը իրապես տեղի է ունեցել, քանի որ հարությանը նրանք ականատես չէին եղել, այլ նշաններով եւ Նրա հետ խոսելիս էին իմացել: Այնպես եւ համբարձման առաջին մասը տեսան նրանք, բայց վերջին մասը նրանք չտեսան: Դրա մասին նրանց տեղեկացնում են հրեշտակները՝ ասելով. «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ եք նայում երկինք, այս Քրիստոսը, որ ձեր մեջից բարձրացավ վեր, նույնպես վերադառնալու է»: Եւ ավելացնում է Գործք Առաքելոցը, թե աշակերտները երկրպագելով Քրիստոսին՝ ուրախությամբ եւ խնդությամբ վերադարձան Երուսաղեմ: Ուրախությամբ վերադարձան, որովհետեւ տեսել էին իրենց Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ համբարձումը: Այն անձին, ում հրեաները նախատինքի էին ենթարկել եւ խաչն էին բարձրացրել:

Քրիստոս համբարձվեց եւ նստավ Հոր աջ կողմը. այնտեղից, որտեղից Նա եկել էր, այնտեղից, որտեղից բերել էր մեզ փրկության ճանապարհը եւ Իր հանրային քարոզչության վերջնամասում Տերը պիտի հայտարարեր. «Ելի ի Հօրէ, եկի աշխարհ, դարձեալ թողում աշխարհ եւ երթամ առ Հայր», այսինքն՝ ելա Հոր մոտից, եկա աշխարհ, դարձյալ թողնում եմ աշխարհը, գնում Իմ Հոր մոտ: Ձիթենյաց լեռից, ասում է Ավետարանը, Տերը օրհնեց նրանց՝ ձեռքերը վեր բարձրացնելով: Ձեռքերը բարձրացնելով օրհնեց, ինչպես որ ստեղծեց առաջին մարդուն: Օրհնելով վերցրեց առաջին դատակնիքը, որը մարդը ժառանգել էր անհնազանդության պատճառով:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Համբարձման օրը ավանդաբար տոնակատարում է Հայրապետական Աթոռի փոխադ-

ության օրը՝ Կիլիկիայի Սիս մայրաքաղաքից դեպի Սուրբ Էջմիածին: Երկար տարիներ դեգերումներից հետո վերջնականապես 1441-ին Հայոց Հայրապետական Աթոռը հանգրվանեց ապրվածադրոշմ այս սրբավայրում, այն տեղը, որ հաստատվել էր Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից: Պատմության ծանր թելադրանքների հետևանքով Հայրապետական Աթոռը տեղից տեղ էր փոխադրվել՝ Դվին, Անի, Արգինա, Հռոմկլա, Սիս, բայց երբեք հայ մարդու սրտից չէր վերացել ապրվածադրոշմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հենց հայերիս համար Հայոց Ձիթենյաց լեռն է, երկնքի եւ երկրի հանդիպման վայրը: Ամեն մի քար այս Տաճարի, ինչպես բանաստեղծն է վկայում. «Դեպի երկինք փանող գաղտնի ճանապարհներ ունի»: Պատմության ընթացքում, պատմության հոլովույթի մեջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որպես գորովագութ Մայր, իր եկեղեցական զգեստները շատ հաճախ օգտագործել է իբրեւ վիրակապ հայ ժողովրդի համար:

Սիրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, քիչ հետո մատուցվելու է «Հայրապետական մաղթանք»: Բոլորիս որդիական ամենաջերմ աղոթքը պիտի լինի առ Ապրված. «Բարեխօսութեամբ վերին քո զօրացն, Տէ՛ր, անշա՛րժ պահեա զաթոռն Հայկազեան» եւ երկար ու ապահով օրեր շնորհի արժանատիր գահակալին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետին՝ Նորին Սրբության գավազանը ծաղկյալ պահելով հայոց երկնակամարներում:

Ավարտելով մեր մտածումները, սիրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, այս Ձիթենյաց լեռան գագաթից, Համբարձման հրաշքը մեր սրտերում, եկե՛ք առաջնորդվենք դեպի երկինք փանող գաղտնի ճանապարհներով եւ հանապազ աղոթենք. *«Աղաչեա՛, Տէ՛ր, զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո»: Ամէն:*